

2016թ. ընթացքում Լոռու մարզում արտաքին կապերի բնագավառում իրականացված այցեր և հանդիպումներ (01.11.2016 դրությամբ)

Մանրամասների համար կարող եք այցելել Լոռու մարզի պաշտոնական կայքի ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ բաժին:



[Ներկայացված Օրգանական գյուղատնտեսության \(ՕԳԱՆ\) դրամաշնորհային ծրագիրը](#) 03.02.2016

Մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության (ՕԳԱՆ) դրամաշնորհային ծրագրի տեղեկատվական և հայտադիմումների պատրաստման դասընթացը:



[Մեկնարկել է «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի երկրորդ փուլը](#) 29.02.2016

Ավստրիական Կարմիր խաչի նախաձեռնած «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրով 2012 թվականին Լոռու մարզում ևս մեկնարկեց քաղաքային և գյուղական համայնքների բնակչության խոցելիության նվազեցման գործառույթ:



[Համակարգչային նորաստեղծ դասարան՝ Վանաձորի խնամքի կենտրոնում](#) 12.03.2016

«Քրոնիմետ» ընկերությունը դեռ 2 տարի առաջ վերանորոգման աշխատանքներ է իրականացրել Վանաձորի խնամքի կենտրոնում: Սա կազմակերպության միակ բարեգործությունը չէ մարզում: Օրերս «Քրոնիմետը» հանդես եկավ հերթական նախաձեռնությամբ՝ համակարգչային

դասարան հիմնելով Վանաձորի խնամքի կենտրոնում: Կազմակերպությունը 15 համակարգիչ և կահույք է տրամադրել համակարգչային կենտրոնի համար:

Լոռու զարգացման հիմնադրամին կից ստեղծվեց «Լոռի ագրոտուր» ասոցիացիա 01.04.2016

Ապրիլի 1-ին Լոռու մարզպետարանում տեղի ունեցավ «Լոռի» տուրիզմի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը, որը վարում էր Լոռու մարզպետ, հոգաբարձուների խորհրդի նախագահ Արթուր Նալբանդյանը:

Հանդիպում «Դիակոնիա» հիմնադրամի ներկայացուցիչների հետ 07.04.2016

Լոռու մարզպետարանը երկար տարիներ համագործակցում է միջազգային 43 կառույցների և հիմնադրամների հետ: Մարզում առկա բազմաթիվ խնդիրներ, որոնք համայնքային բյուջեով հանարավոր չէ իրականացնել, իրագործվում է միջազգային բարեգործական կազմակերպությունների և ծրագրերի միջոցով: Այս առումով առանձնահատուկ է համագործակցությունը «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի հետ, որը 2015 թվականին շուրջ 100 միլիոն դրամի՝ հիմնականում սոցիալական ուղղվածության ներդրումային ծրագրեր է իրականացրել:

Համագործակցությունն ամրագրվեց երկկողմ հուշագրով 11.04.2016

Շուրջ 10 տարվա պատմություն ունի Լոռու մարզպետարանի և «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության համագործակցությունը: Այդ ընթացքում բազմաթիվ ծրագրեր են իրականացվել մարզի համայնքներում:



Լոռի - ՊԱԿԱ ագրոտուրիզմի զարգացման ծրագիրը նոր փուլում է 15.04.2016

Ագրոտուրիզմը Լոռու մարզի զարգացման կարևորագույն ուղղություններից է և մշտապես գտնվում է մարզպետ Արթուր Նալբանդյանի

ուշադրության կենտրոնում: Վերջնական նպատակը մարզում ագրոտուրիզմի զարգացման ուղղությամբ ռազմավարական նորանոր նախագծերի ներդրումն է և անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը:



«Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը ավարտական փուլում է, իսկ արդյունքները գերազանցում են սպասելիքները 22.04.2016

2013թ. մայիսից «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպության կողմից Լոռու մարզում իրականացվում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը: Ծրագրի գործընկերներն են՝ CISP կազմակերպությունը, Լոռու մարզպետարանը և Վանաձորի քաղաքապետարանը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 768.357,95 եվրո, որից 614.686,36 եվրոն ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Ծրագրի տևողությունը 3 տարի էր, և այն արդեն ավարտական փուլում է, իսկ արդյունքները գերազանցում են սպասելիքները:



Լոռու մարզպետարանի և «Դիակոնիա» հիմնադրամի միջև համագործակցության հուշագիր ստորագրվեց 22.04.2016

«Դիակոնիա» հիմնադրամը Լոռու մարզպետարանի հետ համագործակցությամբ բազմաթիվ բարեգործական ծրագրեր է իրականացնում մարզում՝ նպաստելով բնակչության սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավմանը և բարեկեցության ապահովմանը: Իրականացվող հերթական ծրագրերի ընթացքին և արդյունքներին ծանոթանալու նպատակով «Դիակոնիա» հիմնադրամի տնօրեն Պարույր Զամբազյանը, ծրագրերի ղեկավար Մարիամ Անտոնյանը, հիմնադրամի այլ ներկայացուցիչներ մարզպետարանի պատասխանատու պաշտոնատար անձանց ուղեկցությամբ եղան Վանաձորի թիվ 1 հատուկ դպրոցում, Ալավերդու բժշկական կենտրոնում և Սանահինի բժշկական ամբուլատորիայում:

Մարզպետն ընդունեց ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպանին 01.06.2016

Հունիսի 20-ին աշխատանքային այցով դեսպանատան մի խումբ աշխատակիցների ուղեկցությամբ Լոռու մարզում էր ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը: Նրան ընդունեց Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը: Հանդիպմանը մասնակցում էին նաև մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանը, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հասմիկ Մկրտչյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Վահե Դոխոյանը:



Երկկողմ համագործակցության հեռանկարներով
03.06.2016

Մայիսի 31-ից հունիսի 1-ը Շվեդիայի Ուպսալա նահանգի նահանգապետ Պիտեր Էգարդտի հրավերով պաշտոնական այցով Շվեդիայում էր գտնվում ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը:

Պատվիրակության կազմում էին Ալավերդու քաղաքապետ Կարեն Փարեմուզյանը, Սպիտակի քաղաքապետ Գագիկ Սահակյանը և Լոռու մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանը:



GIZ կազմակերպության հետ համագործակցությունը կշարունակվի 08.06.2016

Այսօր Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Թադևոսյանը Լոռու մարզպետարանում հյուրընկալեց Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ)

ներկայացուցիչներին, Գերմանիայի դաշնային հանրապետության Ռայնլանդ Պֆալց նահանգի Լյուդվիգսաֆեն քաղաքի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետ Ուլե Ֆրոյլիխին, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Յուդիթ Ռադերին և քաղաքների միջև համագործակցության պատասխանատու Մարսել Յուրկատին: Հանդիպմանը ներկա էին նաև Լոռու մարզպետարանի և Վանաձորի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք:



Մարզպետն ընդունեց ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպանին 21.06.2016

Հունիսի 20-ին աշխատանքային այցով դեսպանատան մի խումբ աշխատակիցների ուղեկցությամբ Լոռու մարզում էր ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը:

Նրան ընդունեց Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը: Հանդիպմանը մասնակցում էին նաև մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանը, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հասմիկ Մկրտչյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Վահե Դոխոյանը:



Մեկնարկեց հայ-Ֆրանսիական տասներորդ հորեյանական հեծանվարշավը 13.07.2016

Այսօր Վանաձորի խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ դպրոցից մեկնարկեց հայ-Ֆրանսիական 10-րդ հորեյանակ հեծանվարշավը, որին մասնակցում էին Ֆրանսիայից Վանաձոր

ժամանած 25 հեծանվորդ՝ Նոր-Պա-դը-Կալե դեպարտամենտի Առաս քաղաքի թիվ 1 մանկատան տնօրեն Դոմինիկ դը Մորեյի և Բապոմ քաղաքի մանկատան տնօրեն Դիդիե Պայեսի գլխավորությամբ, Երևանի օլիմպիական հերթափոխի մանկական մարզադպրոցի 15 սան՝ կրթօջախի տնօրեն Մարտին Շարբաթյանի գլխավորությամբ, և 18 հեծանվորդ՝ Վանաձորի խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ դպրոցից ու թիվ 1 արհեստագործական ուսումնարանից՝ տնօրեններ՝ Հասմիկ Ներկարարյանի և Կարեն Ղարաքեշիշյանի ուղեկցությամբ:



Տնակային ավանի ևս 12 ընտանիք սեփական տուն կունենա 20.07.2016

Հուլիսի 23-ին մարզկենտրոնի Տարոն 3 թաղամասում շահագործման կհանձնվի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի և Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» կողմից

կառուցված հերթական բազմաբնակարանը: Քսան տարուց ավելի տնակներում գոյատևած ևս 12 ընտանիք վերջապես հարմարավետ բնակարան կունենա:



ՄԱԿ-ի Պարենային համաշխարհային ծրագիրը հնարավոր աղետների դեպքում աջակցություն կցուցաբերի Լոռու մարզին 21.07.2016

Հուլիսի 21-ին մարզպետարանի դահլիճում տեղի ունեցավ մարզպետի տեղակալ Արսեն Դարբինյանի, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Նարեկ

Սարգսյանի, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների և ներկայացուցիչների, Լոռու մարզի փրկարարական վարչության պետ Հրաչ Անտոնյանի, պետի տեղակալ, ՃԿԿ պետ Արթուր Չատինյանի հանդիպումը ՄԱԿ-ի Պարենային համաշխարհային ծրագրի (ՊՀԾ)-ի ներկայացուցիչների հետ՝ ի դեմս Հայաստանյան ներկայացուցիչ, ծրագրերի համակարգող, արտակարգ պատրաստվածության և արձագանքման սպա Յիեն Աջեմյանի:



ՌԱՄԱ ծրագրի հինգերորդ համաժողովը Վանաձորում 29.07.2016

Հուլիսի 29-ին Լոռու մարզպետարանի դահլիճում անցկացվեց ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն»

(ՌԱՄԱ) ծրագրի հինգերորդ համաժողովը:



Ուկրաինայի դեսպանատունը պատրաստ է վերսկսել համագործակցությունը Լոռու մարզի հետ 29.07.2016

Այսօր Լոռու փոխմարզպետ Հովհաննես Թադևոսյանը և մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանն ընդունեցին Հայաստանում Ուկրաինայի

գործերի ժամանակավոր հավատարմատար Վադիմ Պիխուլային, Հայաստանում Ուկրաինայի դեսպանատան առաջին քարտուղար Վասիլի Սերգեյային և Լոռու

մարզի ուկրաինական համայնքի ներկայացուցիչներին: Շնորհակալություն հայտնելով հյուրընկալության համար՝ հյուրերը նշեցին, որ այցելության նպատակը հայ-ուկրաինական հարաբերություններին նոր թափ



Նորարական Together4Armenia հարթակը ներկայացվեց Լոռու գործընկերներին 05.08.2016

Մի քանի օր առաջ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ), «Առաքելություն արևելք»-ը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը և Եվրամիության հայաստանյան պատվիրակությունը

Երևանում հայտարարեցին Together4Armenia (միասին՝ հանուն Հայաստանի) համատեղ նախաձեռնության մեկնարկը: Together4Armenia-ն առցանց հարթակ է, որը ստեղծված է խթանելու մասնագիտական փորձառության փոխանցումը սփյուռքից հայաստանյան համայնքներին՝ ի շահ երեխաների: Հարթակը ստեղծվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական արձագանքն աշխատանքային միգրացիային» ծրագրի շրջանակներում:



Փոխշահավետ համագործակցության նոր հեռանկարների ակնկալիքներ 11.08.2016

Օգոստոսի 10-11-ին աշխատանքային այցով Լոռու մարզ էր ժամանել Չինաստանի Զինաստանի Ժողովրդական հանրապետության Շանսի նահանգի պատվիրակությունը, որի կազմում էին արտաքին

կապերի, առևտրի ու տնտեսության, աճխարդյունաբերության, ինվեստիցիոն դեպարտամենտի ղեկավար աշխատողներ ու պաշտոնյաներ:



Դիակոնիան հավատարիմ է իր կոչմանը

09.09.2016

Լոռու մարզում բարեգործական լայնածավալ ծրագրերի իրագործման հեղինակ է «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամը, որն առատաձեռն էր նաև նոր ուսումնական տարվա մեկնարկին:



Դոնորները ծանոթացան Սպիտակում ստեղծված ջերմոցային տնտեսության պայմաններին

26.09.2016

Սպիտակի քաղաքապետարանի և «Սպիտակի ֆերմեր» իկ-ի կողմից «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի շրջանակներում Սպիտակ քաղաքում հիմնվել է ջերմոցային տնտեսություն: Ծրագիրը հնարավոր է եղել իրականացնել «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ: Ծրագրի իրականացմանն աջակցել են Լոռու մարզպետարանը և մի շարք այլ կառույցներ:

Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավարը պատրաստակամություն է հայտնել շարունակել համագործակցությունը Լոռու մարզի հետ 27.09.2016

Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը նամակ էր հղել Վրաստանի բարեկամ Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Զուրաբ Պատարաձեին՝ ջերմորեն շնորհավորելով նրան բարձր պաշտոն ստանձնելու կապակցությամբ և բարեմաղթել, որ Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության նորանշանակ ղեկավարը հաջողությամբ իրականացնի իր առջև դրված խնդիրները: Նամակում մարզի ղեկավարը նաև հույս էր հայտնել, որ երկու մարզերի միջև համագործակցությունը կշարունակվի և առավել խոր արմատներ կձգի՝ նպաստելով 2014թ. հոկտեմբեր ամսին երկու մարզերի միջև կնքված համագործակցության պայմանագրի ամբողջական իրագործմանը:



Ճանաչողական այցով Լոռու մարզում էր Չինաստանի ժողովրդական հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը 21.10.2016

Հոկտեմբերի 20-ին երկօրյա ճանաչողական այցով Լոռու մարզում էր Չինաստանի ժողովրդական հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան

Տյան Էդլուն, տիկնոջ՝ Չժան Ինմեյի հետ:Նրանց ուղեկցում էին դեսպանատան տնտեսական և առևտրային համագործակցության հարցերով խորհրդատու Վան Խունյանը, դեսպանատան առաջին քարտուղար Վան Շուցզյանը, դեսպանի օգնական Յզո Սյանը: